ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1962 Общественные науки

Լ. Ա. Բարսեղյան

ՀՆԱԳՈՒՅՆ ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայկական լեռնաշխարհում առաջացած և կազմավորված ցեղային միավորումների պատմությունը, արևելագիտության ու հայագիտության մեջ, սովորաբար ընդունված է սկսել XV—XIV դդ. մ. թ. ա., երբ մեզ հասած խեթական, ինչպես և ասսուրական արձանագրությունները բազմիցս նշում են դեպի Հայկական լեռնաշխարհ կատարված ռազմական արշավանքների մասին։

Հայկական լեռնաշխարհում XV—XIV դդ. մ. թ. ա. կազմավորված մի շարք ցեղային միությունների՝ Խալասա-Ացցիի, Ալշեի, Իշուվալի, Զուխմեի, Թեգարամայի, Ուրուատրիի մասին եղած տեղեկություններն ու վկայությունները արդեն հնարավորություն են ավել ճշտելու նրանց տեղադրությունը, ուսումնասիրելու նրանց քաղաքական պատմությունը։

Վերոհիշյալ ցեղային միությունների մասին լավագույն վկայությունները տալիս են խեթական և ասորեստանյան թագավորներ Թուդխալիա III-ի, Շուպպիլուլիումայի, Մուրշիլ II-ի, Ադադներարիի և Սալմանասար I-ի տարեգրություններն ու դաշնագրերը։

Սակայն այս արժեքավոր հուշարձանների ուսումնասիրման հետ միասին, մոռացության էր տրվել խեթական շատ կարևոր մի սեպագիր արձանագրություն, որտեղ նույնպես հիշատակվում են Հայկական լեռնաշխարհում կազմավորված երկու ցեղային միություններ՝ Ուլլիվի և Արմանի (?) երկրները։

Այդ արձանագրությունը, որը հին արևելյան վիմագրության մեջ հայտնի է «Նարամսինը և նրա թշնամիները» անունով, գրված է հին խեթերենով, մոտավորապես 2-րդ հազարամյակի սկզբներին մ. թ. ա.։

Արձանագրության տեքստը հրատարակվել է երկու անգամ, առավել հաջողված օրինակն է Է. Ֆորրերի վերծանությունը[1]։

Ուսումնասիրողների մի մասը (Լանդսբերգեր) գտնում էր, որ այդ արձանագրությունը պատմում է պահպանված մի հին առասպելի մասին, որը չի համապատասխանում պատմական իրականությանը։ Սակայն մի քանի արևելագետների (Էդ. Մեյեր, Մ. Սմիթ, Դորմ, Է. Ֆորրեր, Բ. Հրոզնի) ուսումնասիրությունները և Նարամսինի մասին եղած ասսուրական նորահայտ արձանագրությունը հաստատում են խեթական բնագրում տեղ գտած դեպքերի իրական լինելը[2]։

Ինչպես հայտնի է, Ակկադի թագավորությունը իր ծաղկմանը հասավ Նարամսինի (2290—2254 թթ. մ. թ. ա.)՝ Սարգոն Ակկադացու թոռան ժամանակ։

---

[1] E. Forrer, Die Boghazköl-texte in umschrift, Leipzig, 1926, II, № 3.

[2] G. Gontenau, La civilisation des Hittites et des Mitanniens, Paris, 1934, էջ 51—53։

Իր մի շարք արշավանքներով Նարամսինը կարողացավ Ակկադին ենթարկել հարևան բոլոր երկրները, ընդհուպ մինչև Սիրիա և Հալկական լեռնաշխարհի հարավային մասերը։

Սուզում հայտնաբերված մի բարձրաքանդակ, որի վրա պատկերված է Նարամսինը և նրա բանակը, վկայում է Ակկադի թագավորի հաղթական արշավի մասին դեպի Զագրոսի լեռները։

Նարամսինի արշավանքը պատկերող այս արձանագրության ուսումնասիրությունն է նվիրված Ռ. Հրոզնու փոքրածավալ, բայց արժեքավոր աշխատությունը, որտեղ մանրազնին քննության են առնված պատմա-աշխարհագրական մի շարք վիճելի հարցեր[3]։

Հետագայում նույն արձանագրության ուսումնասիրմանը անդրադարձավ Հ. Գյուտերբոկը, որը կրկին անգամ հրատարակելով այն, հանդես եկավ մի շարք արժեքավոր դիտողություններով[4]։

Խեթական այս ընագրում պատմվում է, թե ինչպես Նարամսինի դեմ մղած պատերազմում պարտվեցին „... ᵐAn-ma-na-i-la LUGAL KUR ᵁᴿᵁ GÛ.SU.A ᵐBu-na-na [-x—x] LUGAL KUR ᵁᴿᵁPa-ak-k[i...] ᵐLa-pa-na-i-la LUGAL KUR ᵁᴿᵁU-ul-li-u-i ᵐ[x-i]n-ni-pa-i-la LUGAL KU[R ᵁᴿᵁ...] ᵐPa-am-ba LUGAL KUR ᵁᴿᵁHa-at-ti ᵐZi-pa-ni L[UGAL K]UR ᵁᴿᵁKa-ni-eš ᵐNu-u[r...] ᵐHu-ua-a-ru-ua-aš LUGAL KUR ᵁᴿᵁA-mur-ri ᵐTi-iš-š[i] en-ki LUGAL KUR ᵁᴿᵁPa-ra-ši [....], ᵐMa-da-ki-na LUGAL KUR ᵁᴿᵁAr-ma-ni ᵐIs-qip-p[u] LUGAL ḪUR. SAG ERIN ᵐTi-eš-š[i....] ᵐUr-La-ra-ak KUR LUGAL ᵘⁿᵘLa-ra-aka ᵐUr-[b]a-an-da LUGAL KUR ᵁᴿᵁNi-ik-ki[...] ᵐIl šu-na-i-il LUGAL ᵁᴿᵁTur-ki ᵐTi[-i]š-bi-in-ki LUGAL KUR ᵁᴿᵁKu-ur-ša-u-ra....."

«.....Անմանաիլան՝ Գուշուա քաղաքի երկրի թագավորը, Բունանան՝ Պակկ[ի...] քաղաքի երկրի թագավորը, Լապանաիլան, Ուլլիվի քաղաքի երկրի թագավորը, [. . . ի]ննիպաիլան . . . . . [քաղաքի երկրի] . . . . . թագավորը, Պամբան՝ Խաթթի քաղաքի երկրի թագավորը, Զիպանին՝ Կաննշ քաղաքի [երկրի թ]ագավորը, Նուր . . . . . , Խուվարուվաշը՝ Ամուրրի քաղաքի երկրի թագավորը, Տիշշ[ե]նկին՝ Պարաշի քաղաքի երկրի թագավորը, ... Մադակինան՝ Արմանի քաղաքի երկրի թագավորը, Իսգիպպ[ուն]՝ . . . . . Թեշշ[ին՝...] . . . . . Ուր-Լարակին՝ Լարակ քաղաքի երկրի թագավորը, Ուր[բ]անդան՝ Նիկկի քաղաքի երկրի թագավորը, Իլշունաիլը՝ Թուրկի քաղաքի երկրի թագավորը, Տի[շ]բինկին Կուրշաուրա քաղաքի երկրի թագավորը . . . . . ։ Ընդհանուր թվով 17 երկրների թագավորներ[5]։

Իրենից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այդ երկրների և հատկապես Ուլլիվի երկրի ճիշտ տեղադրության հարցը, երբ վերջինս գտնվում էր Հալկական լեռնաշխարհում ու հանդիսանում է մեղ հայտնի հնագույն ցեղային միություններից մեկը Հայաստանում։

---

[3] B. Hrozny, Naram-sin et ses ennemis d'aprés un texte Hittite, „Archiv orientalni", 1929, vol. I, № 1, էջ 65—76։

[4] H. G. Güterbock, Die historische Tradition und ihre literarische Gestaltung bei Babylonien und Hethitern bis 1200, „Zeitschrift für Assyrioloqie und verwandte gebiete", Berlin, 1938, Band 44, Heft 1—2.

[5] Նույն տեղում, էջ 68—71։

Ինչպես երևում է խեթական բնագրից, Ուլլիվին մ. թ. ա. XXIII դարում իրենից զգալի ուժ էր ներկայացնում, իսկ նրա թագավոր Լապանաիլան նույնիսկ մասնակցել էր Նարամսինի դեմ ուղղված արշավանքին և պարտություն կրել նրանից[6]։

Ակկադի թագավորի դեմ ուղղված արշավանքը նկարագրող այս բնագրից հետո, մինչև մ. թ. ա. 9-րդ դարը գրավոր աղբյուրներում Ուլլիվիի մասին այլ հիշատակումներ չկան։

Ուլլիվին, որը 9-րդ դ. մ. թ. ա. սկսած ասորեստանյան և ուրարտական արձանագրություններում հանդես է գալիս Ուլլիբա և Ուլլիբանի ձևերով, հավանաբար այդ ժամանակաշրջանում գտնվում էր Նաիրի-Ուրարտու ցեղային միության կազմում և անմիջական սահմանակից էր Ասորեստանին[7]։

Ասորեստանյան Աշշուրնասիրպալ 2-րդ (884—859 թթ. մ. թ. ա.) թագավորը իր տարեգրության մեջ պատմում է, թե ինչպես նվաճեց «...Նիրդուն, Լուլուտա երկրների բնակավայրերը, Դիրբա քաղաքը, Ազգունու, Ուլլիբա, Արբակու, Նիրբու երկրներ» և այնտեղ ստեղծեց առանձին փոխարքայություն[8]։

Սակայն որոշ ժամանակ անց, ինչպես վկայում է ուրարտական թագավոր Մենուան, իր մի արշավանքից հետո նվաճեց և կրակի մատնեց «...Մարմանի երկրի այն կողմից, Էրանի քաղաքը . . . . . Պիրպունոնի քաղաքը, Ուլլիբանի երկիրը...»[9]։

VIII դ. 2-րդ կեսերին մ. թ. ա. Թիգլատպալասար III-ի (745—727 թթ. մ. թ. ա.) կողմից նվաճվում են Ուլլիբան և նրա Կաշտիրու, Պարիսու, Տաշուխա, Մանտուպա քաղաքներն ու մի շարք ամրոցներ[10]։

Թիգլատպալասար III Ուլլիբայում կառուցում է Աշշուրիկիշա քաղաքը և նվաճված երկրներից այնտեղ տեղափոխում գերիներին։ Ասորեստանյան թագավորի տարեգրությունն այդ մասում պատմվում է. «...Նալիի ստորոտում տեղավորված Ուլլուբա և Խարխու երկրները ես ամբողջովին նվաճեցի և միացրի Ասորեստանի սահմաններին։ Իմ թագավորական պատկերը ես կանգնեցրի Կուլլիմերի երկրում։ Ուլ(լուբա) երկրում ես քաղաք կառուցեցի և նրան կոչեցի «Աշշուրիկիշա»[11]։

Հայկական լեռնաշխարհում կազմավորված ամենահնագույն ցեղային միության՝ Ուլլիբայի մասին խեթական, ասորեստանյան և ուրարտական աղբյուրների հաղորդած տեղեկությունները սահմանափակվում են միայն այսքանով։ Է. Ֆորրերը[12], հետագայում Բ. Հրոզնին[13], Ուլլիվին տեղադրում են Հայկական լեռնաշխարհում, ներկայիս Էուլրի տեղում (Դիարբեքիրի շրջան). Մայաֆարկինից հյուսիս, Տիգրիսի արևելյան հոսանքներում։

---

[6] B. Hrozny, Histoire de l'Asie Antérieure, Paris, 1947, էջ 177—178։

[7] Г. А. Меликишвили, Наири-Урарту, Тбилиси, 1954, էջ 51։

[8] И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (АВИИУ), „Вестник древней истории", 1951, № 2, № 26, էջ 293։

[9] Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960, № 28, էջ 150—151։

[10] АВИИУ, № 42, էջ 313։

[11] АВИИУ, № 43, էջ 314։

[12] E. Forrer, Die Provinzeinteilung des assyrischen Reiches, Leipzig, 1921, էջ 85։

[13] B. Hrozny, Naram-sin et ses ennemis d'aprés un texte Hittite, „Archiv. orientalni", 1929, vol. I, № 1, էջ 68։

Աղբյուրների հաղորդած այսպիսի թռուցիկ հիշատակումների հիման վրա անկասկած դժվար է ուսումնասիրել Ուլլիվիի պատմությունը և ամբողջացնել այն։

Հայկական լեռնաշխարհի հարավում կազմավորված այս քաղաք-երկիրը 23-րդ դարում մ. թ. ա. իր սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակով չէր տարբերվում հարևան ցեղային միությունների և երկրների։ Այստեղ, ինչպես Խաթթի, Կանեշ, Պարաշի, Լարակ, Ամուրրի և շատ ուրիշ քաղաք-երկրներում, նոր էր սկսվել շերտավորումը ցեղախմբի համահավասար անդամների միջև, իսկ ավագանու գլուխ կանգնած ցեղապետը արդեն օժտված էր մեծ իրավունքներով։

Պարտվելով և ապա ընկնելով Ակկադի տիրապետության տակ, Ուլլիվի քաղաք-երկիրը շարունակում է իր գոյությունը ու միայն մ. թ. ա. 9-րդ դարից սկսած, հավանարար, հզորանալով իր կազմում է կենտրոնացնում մի շարք բնակավայրեր և քաղաքներ։

Այսպիսի քաղաք-երկրի գոյությունը Հայաստանում, դեռևս հնագույն ժամանակներից, իրենից պատմագիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում և ուսումնասիրման տեսակետից լուրջ մոտեցում է պահանջում։